ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____ 2018 թ. N _____

ք.Ստեփանակերտ

Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Հավանություն տալ Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
2018 թվականի _____ ___-ի
N ____ որոշման

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Գյուղատնտեսության ներկա վիճակը և հայեցակարգի ընդունման անհրաժեշտությունը

2. Հայեցակարգի նպատակը և խնդիրները

3. Հայեցակարգի հիմնական ուղղությունները

4. Հայեցակարգից բխող միջոցառումները և պետական աջակցությունը

5. Ակնկալվող արդյունքները

Ներածություն

Գյուղատնտեսությունը եղել և շարունակում է մնալ Արցախի Հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկը, որպես բնակչության՝ պարենի նկատմամբ կենսական պահանջմունքների բավարարման աղբյուր, զբաղվածության ապահովման բնագավառ, ինչպես նաև՝ գյուղական բնակավայրերի զարգացման հիմք և տնտեսական աճի հիմնական բաղադրիչ: Ոլորտի ռազմավարական նշանակությունը և մտավոր ու ֆիզիկական մեծ ջանքեր կլանելու հատկությունն ու աշխատանքների կազմակերպման յուրահատկությունը պահանջում են կառավարման համակարգային և առանձնահատուկ մոտեցումներ:

Խորհրդային Լեռնային Ղարաբաղում գյուղատնտեսությունը զարգանում էր ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ ներդրումների բացակայության պայմաններում, էքստենսիվ եղանակով: Կոլտնտեսություններում, սովխոզային տնտեսություններում և միջտնտեսային ձեռնարկություններում ստեղծված արտադրանքն ուներ կայուն պահանջարկ պետության կողմից, իսկ գյուղացիական տնտեսություններում արտադրված գյուղատնտեսական մթերքները հիմնականում սեփական սպառման համար էին, ուստի, բարձրորակ ապրանքային տեսքով գյուղատնտեսական մթերքների արտադրությունը գրեթե զրկված էր մոտիվացիայից: Դա, կարելի է ասել, Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի առևտրայնացման մշակույթի ձևավորման և գիտական հիմքերի վրա գյուղատնտեսական արտադրության զարգացման գործընթացի հիմնական խոչընդոտներից մեկն էր:

Խորհրդային տնտեսական համակարգի փլուզումը, որը Լեռնային Ղարաբաղում զուգորդվեց ազգային ազատագրական պայքարով և անկախության հռչակմամբ, դրեց սեփականության վերաբաշխման ու տնտեսական նոր հարաբերությունների ձևավորման օբյեկտիվ պահանջ, որին գումարվեց պատերազմական գործողությունների արդյունքում համարյա թե զրոյական մակարդակի հասցված տնտեսության, առաջին հերթին գյուղատնտեսության, արագ վերականգնման անհրաժեշտությունը: 1995–1998 թվականներին լուծարվեցին հանրապետությունում գործող 73 կոլեկտիվ ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին ճյուղի արտադրանքի ավելի քան 90 տոկոսը: Ձևավորվեցին 12 000-ից ավելի անհատական տնտեսություններ, որոնց փոխանցվեցին վարելահողերի 23 տոկոսը և կոլեկտիվ ու պետական տնտեսություններին պատկանող բոլոր գյուղատնտեսական կենդանիները: Հողի սեփականաշնորհումը գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով և մեղմեց սովի վտանգը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները փոփոխությունների ենթարկեցին ցանքատարածությունները, սկսեցին կամային ընտրությամբ բույսեր մշակել և անասուններ պահել: Գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության հետևանքով գյուղացիական տնտեսությունների մեծ մասը վերածվեց ձեռքի աշխատանքի վրա հիմնված բնատնտեսության: Տնտեսական վերափոխումների սկզբնական փուլում գյուղատնտեսությունը դժվարությամբ էր հարմարվում շուկայական հարաբերություններին: Հանրապետությունում արձանագրվեց գյուղատնտեսական արտադրանքի զգալի նվազում Խորհրդային տարիների

համեմատ: Պահանջվեցին հսկայական ջանքեր գյուղատնտեսության հետագա անկումը կանխելու և վիճակը կայունացնելու համար:

Պետական տարբեր ծրագրերի իրագործման արդյունքում ոլորտում արձանագրվեցին դրական տեղաշարժեր, սակայն, վերջիններս ձեռք են բերվել առավելապես էքստենսիվ գործոնների՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և անասունների գլխաքանակի ավելացման շնորհիվ:

Սույն հայեցակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***կոոպերացիա և փոխօգնության կոոպերատիվներ***՝ այս կամ այն արտադրական խնդիրը լուծելու նպատակով ֆերմերային տնտեսությունների ջանքերի միավորում.

2) ***համապատասխան գիտելիքներ***՝ Արցախի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում մասնագիտական դասընթացներին մասնակցելու արդյունքում ձեռքբերված գիտելիքներ, որոնք հավաստվում են համապատասխանության վկայականով (հավաստագրով).

3) ***համապատասխանության վկայական***՝ փաստաթուղթ, որը վկայում է Արցախի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում մասնագիտական դասընթացին մասնակցելու արդյունքում ձեռքբերված գիտելիքների մասին.

4) ***նվազագույնը չորսդաշտյա ցանքաշրջանառություն***՝ մշակվող հողատարածքում առնվազն չորս տեսակի կամ նույն հողատարածքում իրար հաջորդող առնվազն չորս տարվա ընթացքում չորս տարբեր տեսակի մշակաբույսերի, (անհրաժեշտության դեպքում նաև սև ցելերի) ցանքաշրջանառություն (ցանքափոխություն).

5) ***ֆերմեր***՝ ագարակատեր, գյուղացի ձեռնարկատեր, որը հանդիսանում է հողի սեփականատեր կամ տիրապետող և (կամ) օգտագործող և այնտեղ զբաղվում է գյուղատնտեսությամբ.

6) ***ֆերմերային (գյուղացիական) տնտեսություն***՝ առավելապես սեփական կամ ընտանեկան աշխատուժը օգտագործող ինքնազբաղված սուբյեկտներ.

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության ինտենսիվ զարգացմանը դեռևս խոչընդոտում են մի շարք գործոններ, որոնցից են ոլորտի բարձր ռիսկայնությունը, խոշոր ապրանքային տնտեսությունների ցածր տեսակարար կշիռը, արտադրական (նաև ոռոգման համակարգեր) և շուկայական (ֆինանսական) ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, գյուղատնտեսության գրագետ վարման մշակույթի, նորագույն տեխնոլոգիաների բացակայությունը, որոնք, նույնիսկ պետական աջակցության ներկա պայմաններում, բարդացնում են ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղատնտեսական մթերքների իրացման և վերամշակման օղակների ձևավորման աշխատանքները:

Ժամանակակից գյուղատնտեսության զարգացման միակ ճանապարհն ինտենսիվացման մակարդակի հետևողական բարձրացումն է, նորագույն տեխնոլոգիաների և կառավարման համակարգերի կիրառումը, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում արդյունավետ օգտագործել ոլորտի ներուժը և ապահովել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձր ցուցանիշները:

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման սույն հայեցակարգի (այսուհետ՝ հայեցակարգ) ընդունման անհրաժեշտությունը բխում է երկրի ագրարային ոլորտի ներուժային հնարավորությունների արդյունավետ օգտագործման և առկա խնդիրների լուծման նոր ուղիների և մեխանիզմների սահմանման, ինչպես նաև միջազգային պրակտիկայում կիրառվող գյուղատնտեսական արտադրության նորագույն տեխնոլոգիաների և կազմակերպման առաջադեմ մեթոդների ներդրման գործընթացների համակարգման արդի պահանջներից:

2. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայեցակարգը նպատակ ունի, հիմք ընդունելով ագրարային բարեփոխումների անցած ժամանակահատվածի ձեռքբերումները, ինչպես նաև՝ թույլ տված սխալներն ու բացթողումները, իրատեսորեն գնահատելով գյուղատնտեսության հիմնախնդիրները, սահմանել գյուղատնտեսության զարգացման հեռանկարային նպատակները, հստակեցնել կենսագործման հիմնական ուղղություններն ու միջոցները, մասնավորապես՝ գյուղացիական տնտեսություններին պետական աջակցության տրամադրման պայմանները, մեխանիզմներն ու գործիքակազմը:

Հայեցակարգի հիմնական խնդիրներն են՝

1) գյուղատնտեսության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի և գյուղատնտեսության ֆինանսավորման նպատակային քաղաքականության կատարելագործումը, պարենային ու տնտեսական անվտանգության ապահովման միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) բնատնտեսական գործոններով և պահանջարկով պայմանավորված գոտիական նախընտրելի մասնագիտացման նպաստումը, արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը և բուսաբուծության ու անասնաբուծության ճյուղերի համաչափ զարգացումը.

3) անկախ սեփականության ձևից հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության նոր մոտեցումների մշակումը և իրականացումը, հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի և արդյունավետության, բերրիության բարձրացումը՝ ագրոտեխնիկական, մելիորատիվ միջոցառումների կիրառման միջոցով անցումն ինտենսիվ գյուղատնտեսության.

4) նվազագույնը չորսդաշտյա ցանքաշրջանառության մշակույթի ներդրման օժանդակելը՝ այն պարտադիր պայման դարձնելով պետական աջակցության ծրագրերի շահառուների համար.

5) ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման և բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության խթանումը, սերմերի ապահովվածության ծրագրերի իրականացումը, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացումը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար սերմերի որակի հսկողության մատչելի մեխանիզմների ներդրումը.

6) բույսերի պաշտպանության և կարանտին միջոցառումների պետական ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացումը.

7) օրգանական գյուղատնտեսության և բնական երկրագործության ներուժի օգտագործման խթանումը.

8) անասնաբուծության ճյուղերի մասնագիտացմանը և ռացիոնալ տեղաբաշխմանն աջակցելը.

9) տոհմային գործի զարգացման և հոտի վերարտադրության միջոցառումների պետական քաղաքականության իրականացումը՝ նախապատվությունը տալով ոչ միայն բարձրարժեք տոհմային կենդանիների անընդհատ ներկրմանը, այլ նաև արհեստական սերմնավորմանը, կամ տոհմային ցուլերի տրամադրման միջոցով տեղական նախրի բարելավմանը և մթերատվության բարձրացմանը.

10) անասնաբուժության համակարգի ինստիտուցիոնալ բարելավումը և անասնաբուժական միջոցառումների իրականացման արդյունավետ մեխանիզմների ներդրումը.

11) կերի բազայի բարելավումը՝ դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավմամբ, կերային մշակաբույսերի սերմերի տրամադրման և սերմնաբուծության պետական ծրագրերի իրականացմամբ, ինչպես նաև հանրապետության շրջաններում խտացրած կերերի արտադրության փոքր արտադրամասերի ստեղծմանն աջակցությամբ.

12) անասնաբուծական առևտրային կազմակերպությունների, սպանդանոցների տարածքային ցանցի և կաթի վերամշակման փայատիրական ընկերությունների ձևավորման ու զարգացման, գյուղատնտեսական մթերքների հավաքման կետերի հիմնման աջակցության մեխանիզմների կատարելագործումը.

13) մեղվաբուծության զարգացումը, այդ թվում՝ մեղրի տեսակավորման նպատակով պետական չափորոշիչների մշակումը, ոլորտին սպասարկող համապատասխան ենթակառուցվածքների և մեղրի իրացման ու արտահանման հնարավորությունների զարգացումը.

14) սննդամթերքի անվտանգության մակարդակի հետևողական բարձրացումը.

15) տեղական արտադրության գյուղատնտեսական ապրանքների մրցունակության բարձրացմանը նպաստելը և ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքները տեղականով փոխարինվող ու արտահանման ուղղվածություն ունեցող արտադրությունների զարգացմանը աջակցելը.

16) վերամշակող կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխման նպատակային քաղաքականության իրականացումը, վերամշակող կազմակերպություններում արդիական տեխնոլոգիաների ներդրման, գյուղատնտեսական հումք արտադրողների հետ

պայմանագրային հարաբերությունների ձևավորման ու զարգացման, արտադրանքը շուկաներում առաջմղման և այլ գործառնությունների իրականացմանն աջակցելը.

17) գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի թարմացումը և գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման մատչելի մեխանիզմների ներդրումը, այդ թվում՝ նպաստելով մասնավոր սպասարկման կոոպերատիվների ստեղծմանը.

18) ոռոգման համակարգի բարելավումը, այդ թվում՝ ոռոգման ցանցի ընդլայնումը և ջրախնայողական արդիական համակարգերի խթանումը.

19) գյուղատնտեսական ռիսկերի մեղմացման քաղաքականության իրականացումը, գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգերի ստեղծման նախադրյալների ձևավորմանն ու փուլային զարգացմանն աջակցելը.

20) գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց և գյուղատնտեսության բնագավառը սպասարկող մասնագետների մասնագիտական ուսուցումը և վերապատրաստումը, խորհրդատվական և տեղեկատվական համակարգերի ստեղծումը և զարգացումը.

21) ոլորտում տնտեսավարման արդյունավետ ձևերի և գյուղացիական տնտեսությունների խոշորացման խթանումը.

22) պետական նպատակային աջակցության գործիքների, վարկերի մատչելիության և հասանելիության բարձրացման մեխանիզմների, պատասխանատվության լծակների կատարելագործումը.

23) գյուղատնտեսության հաշվառման համակարգի զարգացումը.

24) ոլորտում նորարարությունների խթանումը:

3. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հայեցակարգի իրագործման հիմքում ընկած խթանման ենթակա հիմնական ուղղություններն են՝

1) <u>բուսաբուծության ոլորտի զարգացում.</u>

2) <u>անասնաբուծության ոլորտի զարգացում.</u>

3) <u>անասնաբուժական գործի արդյունավետության բարձրացում.</u>

4) <u>ոռոգման արդիական համակարգերի ներդրում և ընդլայնում.</u>

5) <u>գյուղատնտեսական հումքի վերամշակում.</u>

6) <u>սննդամթերքի անվտանգության և որակի ապահովում:</u>

Հայեցակարգի շրջանակներում բուսաբուծության ոլորտի զարգացումը ներառում է՝

1) *Դաշտավարության ճյուղի զարգացումը.*

Դաշտավարության ճյուղի զարգացման համար նախատեսվում է ցանքաշրջանառության սխեմաների կիրառման, պարարտացման, բույսերի պաշտ-պանության առաջավոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով բարձրացնել վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, բարելավել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի կառուցվածքը.

2) *Բանջարաբուծության ճյուղի զարգացումը.*

Բանջարաբուծության ճյուղի զարգացման համար նախատեսվում է մշակության ագրոտեխնիկական պահանջների ապահովման միջոցով բարձրացնել բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը, բարելավել բերքի որակական ցուցանիշները, խթանել ավանդական և ոչ ավանդական, տեղական և արտաքին շուկաներում պահանջարկ ունեցող բանջարեղենի արտադրությունը, աջակցել ջերմոցային տնտեսությունների զարգացմանը և մրցունակության բարձրացմանը.

3) *Պտղաբուծության (այգեգործության) զարգացումը.*

Պտղաբուծության (այգեգործության) զարգացման համար նախատեսվում է ստեղծել այգեգործության զարգացման արժեշղթա, խթանել ինտենսիվ այգեգործության զարգացումը: Իրականացնել պտղաբուծության աշխարհագրության ընդլայնման քաղաքականություն, ավելացնել բազմամյա տնկարկների տարածքները՝ առաջնահերթություն տալով նռան այգիների հիմնադրմանը և խաղողի գինեմետ և սեղանի քիշմիշային սորտերի այգիների ընդարձակմանը, խթանել մասնագիտացված տնկարանային տնտեսությունների հիմնումը:

Անասնաբուծության ոլորտի կայունացման և զարգացման համար նախատեսվում է՝

1) իրականացնել անասնաբուծության ոլորտի կանոնակարգում.

2) կերարտադրությունում, ինչպես նաև կերակուտակման և կերակրման գործընթացներում նոր տեխնոլոգիական միջոցների ներդնման խթանում.

3) անասնաբուծության բոլոր ճյուղերի զարգացում, տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացում.

4) արոտների կառավարման նոր մեխանիզմների ներդնում և ջրարբիացում:

Անասնաբուժության ոլորտի կայունացման և զարգացման համար նախատեսվում է՝

1) հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների իրականացում.

2) մասնագետների մասնագիտական գիտելիքների շարունակական բարձրացում և աշխատանքային պայմանների բարելավում:

Ոռոգման համակարգերի ներդրման, ընդլայնման և արդիականացման համար նախատեսվում է՝

1) ոռոգվող հողատարածքների ավելացում.

2) տեխնիկական վիճակի բարելավման և արդիականացման միջոցով ոռոգման ենթակա գյուղատնտեսական հողատարածքների ջրապահովվածության մակարդակի բարձրացում.

3) ոռոգման ջրի կորուստների և համակարգերի շահագործման ծախսերի նվազեցում.

4) հողագործության արդյունավետության բարձրացում՝ այդ նպատակով իրականացնելով մելիորատիվ սպասարկման բարելավում, նոր ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրում և գործող սուբսիդավորման համակարգի բարեփոխում: Ջրախնայողական տեխնոլոգիաների՝ կաթիլային, անձրևային, ենթահողային ոռոգման ներդրում:

5) ոռոգման ջրի մատակարարման հուսալիության բարձրացում.

Գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի զարգացման համար նախատեսվում է՝

1) բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունում արդիական տեխնոլոգիաների ներդրում.

2) բուսաբուծական և անասնաբուծական մթերքների և հումքի արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման ու պահպանման տեխնոլոգիական պրոցեսների խթանում.

Սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման առաջնային խնդիրների մեջ առանձնանում է սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացումը, որի հիմնական ուղղություններն են՝

1) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում միջպետական և միջազգային համագործակցության շրջանակներում Արցախի Հանրապետության օրենսդրական դաշտի վերանայումը, համապատասխան գործողությունների իրականացումը և տեղեկատվության փոխանակումը.

2) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում միջպետական և միջազգային ստանդարտների տեղայնացման, անվտանգության համակարգերի, ընթացակարգերի և չափանիշների ներդրման աշխատանքների իրականացումը.

3) պետական օժանդակությամբ սննդամթերքի արտադրության պատշաճ հիգիենիկ և արտադրական գործելակարգերի, ինչպես նաև վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (ՎՎՀԿԿ) համակարգերի կամ որակի անվտանգության միջազգային ստանդարտի ներդրումը.

4) սննդամթերքի անվտանգության լաբորատորիաների կարողությունների հզորացումը և միջազգային ստանդարտով հավատարմագրումը.

5) գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ պարունակող սննդի ու կերի վերաբերյալ օրենսդրական դաշտի բարելավում՝ մարդու կյանքի և առողջության, կենդանիների առողջության և բարեկեցության, շրջակա միջավայրի կենսաբազմազանության պահպանության և սպառողների շահերի պաշտպանության համար.

6) ներմուծվող ու տեղական արտադրության սննդամթերքում պեստիցիդների մնացորդների, վնասակար օրգանիզմների, անասնաբուժական մնացորդների, ալերգենների, սննդային հավելումների և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների վերահսկողության իրականացում և մոնիթորինգային ծրագրերի մշակում:

4. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայեցակարգից բխող միջոցառումներն են՝

1) հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան մշակության և բերքահավաքի առաջադիմական տեխնոլոգիաների արմատավորումը: Այդ

նպատակով՝ նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի իրականացումը, վերջինիս ուղղությամբ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում զբաղված տնտեսավարողներին խորհրդատվական, տեղեկատվական, դրամաշնորհային աջակցության տրամադրումը, նպատակային վարկավորումը, գոտիական առանձնահատկություններին համապատասխան հանրապետության շրջաններում ըստ գյուղատնտեսության հիմնական ճյուղերի նախընտրելի մասնագիտացումների առանձնացումը.

2) բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի ցանքատարածքների ընդլայնման և կառուցվածքի բարելավման նպատակով ցածր ինտենսիվության մշակաբույսերի առավել արժեքավոր տեսակներով փոխարինման, հանրապետության պայմաններին համապատասխանող ոչ ավանդական մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաների յուրացման, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության, պարարտացման, բույսերի պաշտպանության առաջավոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի իրականացումը.

3) աշնանացան հացահատիկային մշակաբույսերի սելեկցիայի և առաջնային սերմնաբուծության գիտական ապահովումը, սերմնաբուծության զարգացման և սերմարտադրության ծրագրերի իրականացումը, սորտափորձարկման համակարգի կատարելագործումը և ընդլայնումը.

4) գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքի, մշակության, բերքահավաքի, բերքի պահպանության գործընթացում ագրոտեխնիկական միջոցառումների պահանջների կատարման նպատակով գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների (սերմեր, հանքային պարարտանյութեր, թունաքիմիկատներ, դիզելային վառելանյութ և այլն) գների մատչելիության բարձրացման ծրագրերի իրականացումը, վարկավորման պայմանների բարելավումը.

5) բույսերի և կենդանիների առավել վտանգավոր և մասսայական վարակիչ հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի աշխատանքների ծավալների ավելացումը, այդ բնագավառներում մոնիթորինգի և պայքարի արդիական մեթոդների, բույսերի և կենդանիների պաշտպանության ինտեգրացված պայքարի ներդրումը, բույսերի և կենդանիների պաշտպանության միջոցառումների երկարաժամկետ և տարեկան ծրագրերի մշակումը և իրականացումը.

6) բուսասանիտարական և անասնաբուժասանիտարական փորձաքննության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացումը, բույսերի և կենդանիների պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներկրման, պահպանության ու վաճառքի գործընթացների տեսչական հսկողության ուժեղացումը.

7) հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման երկարաժամկետ և տարեկան ծրագրի իրականացման շրջանակներում ըստ համայնքների գյուղատնտեսական հողերի ագրոքիմիական քարտեզների կազմումը, հողերի ագրոքիմիական հետազոտությունների իրականացման մեխանիզմների կատարելագործումը.

8) ավանդական, ոչ ավանդական և երկրում ինքնաբավության կարիք ունեցող պտուղների (նուռ, ընկույզ, թուզ, արևելյան խուրմա, ձիթապտուղ, խնձոր, տանձ, սերկեվիլ, հոն և այլն) և հատապտուղների (ելակ, մոշ, ազնվամորի և այլն) արտադրությունը, հասունացման տարբեր խմբերի պատկանող տեսակների, սորտերի աճեցումը, մասնագիտացված տնկարանային տնտեսությունների հիմնումը, խթանող ծրագրերի իրականացումը.

9) խաղողի սեղանի, ունիվերսալ և տեխնիկական նոր սորտերի ներդրման և մշակության ծրագրերի իրականացումը, առանձնակի ուշադրություն դարձնել վիրուսազերծ տնկանյութի արտադրության և հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը.

10) բնական աղետների (կարկտահարություն, երաշտ, սելավներ, ողողումներ և այլն) հետևանքների մեղմմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Հակակարկտային տեխնոլոգիաների կիրառումը և դրանց ցանցի ընդլայնումը, ինչպես նաև կարկտապաշտպան ցանցաշերտերի կիրառման համար նախադրյալների ստեղծումը.

11) պետական աջակցության հիմնական ձևերի և եղանակների սահմանումը՝ պայմանով, որ դրանցից օգտվելու իրավունք ունենան միայն համապատասխան գիտելիքներ և (կամ) փորձ և դրա մասին հավաստող փաստաթուղթ ունեցող անձինք.

12) կոոպերացիայի ու փոխօգնության կոոպերատիվների համակարգի զարգացում՝ պետության աջակցությամբ գյուղերում արտադրանքի առաջնային արդյունաբերական վերամշակման արտադրամասերի ստեղծման շնորհիվ.

13) կենդանիների հաշվառման կանոնակարգումը.

14) արոտավայրերի ու խոտհարքերի գնահատման և հաշվառման կանոնակարգումը.

15) կենդանիների պահվածքի կանոնների մշակումը.

16) անասնատերերի կարգավիճակի և լիազորությունների շրջանակի մշակումը.

17) տեխնիկական միջոցների և սարքավորումների ձեռք բերման աջակցությունը.

18) բարձր սննդարարություն ապահովող կերակուլտուրաների մշակության աջակցությունը, համակցված կերերի արտադրության խթանումը.

19) տոհմային կենդանիների ներկրման աջակցությունը, տեղական կենդանիների մթերատու հատկանիշների բարելավումը.

20) խոշոր եղջերավոր կենդանիների շուրջտարվա մսուրային պահվածքի խթանումը.

21) ավանդական և ոչ ավանդական թռչունների ու կենդանիների բուծմանն ուղղված ծրագրերի խթանումը.

22) մեղվաբուծության զարգացման խթանումը.

23) համաճարակաբանական իրավիճակի գնահատման և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, պատվաստանյութերի և այլ միջոցների ձեռքբերումը.

24) միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման և տեղայնացման նպատակով տարբեր երկրների առաջավոր կառույցների և մասնագետների հետ համագործակցության հաստատումը, փորձի փոխանակում, մասնագետների վերապատրաստումը.

25) անասնաբուժական սպասարկման կայանների նյութատեխնիկական բազայի արդիականացումը և վերազինումը.

26) ոլորտում փոքր և միջին ձեռնարկատերերին աջակցության ցուցաբերումը.

27) արտադրված գյուղատնտեսական հումքի զգալի մասի վերամշակումը փոքր ու միջին ձեռնարկություններում.

28) գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական մթերքների վերամշակման և գյուղատնտեսության սպասարկման կարողությունների ստեղծմանն աջակցության ցուցաբերումը.

29) արտեզյան ջրհորների կառուցման և վերանորոգման ծրագրերի իրականացումը.

30) ջրամբարների տեխնիկական անվտանգության ուսումնասիրումը և անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

31) ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգումը, վերականգնումը և պահպանումը, կարգավորիչ ու չափորոշիչ սարքերի և սարքավորումների տեղադրումը, կառավարման առավել արդյունավետ եղանակների կիրառումը.

32) խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորումը, ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանումը.

33) բուսաբուծության և անասնաբուծության ոլորտներում բնական աղետների հետևանքով կրած վնասների փոխհատուցման մեխանիզմների ներդնումը.

34) գյուղատնտեսական գործունեության մեջ ընդգրկված ֆիզիկական անձանց և տնտեսավարող սուբյեկտների պարտադիր պետական գրանցումը (հաշվառումը).

35) օրենսդրությամբ սահմանված կարգով պետականորեն գրանցված (հաշվառված) և գյուղատնտեսական գործունեության մեջ ընդգրկված ֆիզիկական անձանց և տնտեսավարող սուբյեկտներին (ֆերմերներ), եկամտային հարկի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը:

Գյուղատնտեսության զարգացման՝ սույն հայեցակարգով ամրագրված նպատակների իրագործումը պահանջում է ոլորտում առկա պետական աջակցության համակարգի բարելավում՝ աջակցության նոր ձևերի սահմանում, սկզբունքների ու մոտեցումների կիրառում:

5. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն հայեցակարգով սահմանված ուղղություններով գյուղատնտեսության զարգացման ծրագրերի և միջոցառումների իրականացմամբ նախատեսվում է 10 տարում հասնել հետևյալ արդյունքներին.

1) ***Դաշտավարություն*** – հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանն ուղղված ծրագրերի շնորհիվ կանխատեսվող ժամանակահատվածում ցանքային տարածքները կհասցվեն 100 000 հեկտարի, որը կգերազանցի 2017 թվականի մակարդակը շուրջ 35 տոկոսով: Ցանքաշրջանառության համակարգերի կիրառումը կդարձվի պարտադիր պայման, ինչի արդյունքում կավելացվեն գարնանացան մշակաբույսերի տարածքները և կկազմեն ընդհանուր ցանքատարածքի շուրջ 35 տոկոսը:

Նույն ժամանակահատվածում կերային մշակաբույսերի տարածությունը կհասցվի 6 000 հեկտարի:

2) ***Բանջարաբուծություն*** – ճյուղում շարունակական իրականացվող պետական աջակցության ծրագրերի շնորհիվ (դրամաշնորհների, նպատակային վարկերի տրամադրում) և մշակության ագրոտեխնիկական պահանջների ապահովման միջոցով զգալիորեն կբարելավվեն բանջարեղենի որակական ցուցանիշները, կբարձրանան բերքատվությունը և մրցունակությունը: Արդյունքում տեղական արտադրանքի շնորհիվ հնարավոր է լինելու նվազեցնել ներմուծման ծավալները, ինչպես նաև կխթանվի վերամշակող արդյունաբերության զարգացումը:

3) ***Պտղաբուծություն (այգեգործություն)*** – պտղաբուծության ծավալների և աշխարհագրության ընդլայնման քաղաքականության և ինտենսիվ այգեգործության խթանման ծրագրերի իրականացման շնորհիվ կանխատեսվող ժամանակահատվածում բազմամյա տնկարկների տարածքները կհասցվեն շուրջ 12 000 հեկտարի, այդ թվում 5 000 հեկտար նոռան այգի:

4) ***Անասնաբուծություն*** - կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման, արոտների կառավարման և ջրարբիացման, անասնաբուծության կանոնակարգման, տոհմային ցեղի ընդլայնման՝ մասնավորապես տեղական նախրի ցեղային հատկանիշների բարելավման արդյունքում հանրապետությունում շոշափելի կբարձրանա անասնաբուծության շահութաբերությունը և կավելանա անասնագլխաքանակը.

Մասնավորապես՝ հանրապետությունում նախատեսվում է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի աճ: Խոշոր եղջերավոր կենդանիների մասով՝ շուրջ 25 տոկոս, խոզերի մասով՝ շուրջ 80 տոկոս, ոչխարների ու այծերի գլխաքանակի աճը կկազմի ավելի քան 70 տոկոս, թռչունների քանակը կավելանա շուրջ 10 տոկոսով: Տեղական նախրի որակական հատկանիշների, կերակրման և պահվածքի բարելավման շնորհիվ մեկ կովի կաթնատվության մակարդակը կհասցվի 3300 կիլոգրամի, ապահովելով շուրջ 70 տոկոս աճ 2016 թվականի ցուցանշի նկատմամբ, իսկ թռչունների միջին տարեկան ձվատվությունը կհասցվի 225 հատի:

Մեղվաբուծության զարգացման նպատակով նախատեսվում է իրականացնել արտոնյալ պայմաններով մեղվաընտանիքների տրամադրում և համապատասխան մասնագիտական ուսուցման կազմակերպում: Այս ուղղությամբ նախատեսվում է ունենալ 35000 մեղվաընտանիք, որը կգերազանցի 2017 թվականի ցուցանիշը շուրջ 35 տոկոսով:

5) ***Անասնաբուժություն*** - Ճշգրիտ հաշվառման և հակահամաճարակային միջոցառումների իրականացման արդյունքում հանրապետությունում կպահպանվի կայուն համաճարակային իրավիճակ, բնակչությանը կմատակարարվեն անասնաբուծական ծագման անվտանգ սննդամթերքներ.

6) ***Վերամշակում*** – գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգում որակի նկատմամբ հետևողական վերահսկողության և հետևողական պետական աջակցության ծրագրերի իրականացման շնորհիվ կանխատեսվող ժամանակահատվածում կընդլայնվեն ոլորտի արտադրական հզորությունները, կբարձրանան արտադրանքի

որակական հատկանիշները և մրցունակությունը, կավելանան թողարկվող տեսականին և արտահանման ծավալները:

7) ագրարային բարեփոխումների անցած ժամանակահատվածի ձեռքբերումների, ինչպես նաև թույլ տված սխալների ու բացթողումների և գյուղատնտեսության հիմնախնդիրների իրատեսորեն գնահատմամբ կազմված սույն հայեցակարգի ընդունմամբ կստեղծվեն իրավական հիմքեր գյուղացիական տնտեսությունների խոշորացմանն ուղղված քաղաքականության հստակեցման, գործող փոքր չափերի գյուղացիական տնտեսություններին պետական աջակցության արդյունավետ մեխանիզմների ներդրման, գյուղատնտեսական հողատեսքերի ոչ նպատակային օգտագործման կամ ընդհանրապես չօգտագործման, հողի բերրիության պահպանման ու բարձրացման, ագրարային կանոնների խախտման համար պատասխանատվությունը խստացնող դրույթների ամրագրման և կանոնակարգված գյուղատնտեսության վարման համար:

Սույն հայեցակարգի իրագործման հիմքում ընկած հիմնական ուղղությունների կատարումն ապահովելու նպատակով Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով կհաստատվեն համապատասխան ծրագրեր, կմանրամասնվեն պետական աջակցության ձևերն ու չափերը, ինչի արդյունքում կապահովվի հայեցակարգով նախատեսված ակնկալվող արդյունքների իրագործումը: Հայեցակարգով սահմանված ժամանակահատվածում մշակվող ու կիրառվող քաղաքականությունը և դրա ակնկալվող արդյունքները կբերեն երկրում պարենամթերքներով ապահովման ինքնաբավության մակարդակի բարձրացմանը և միջազգային մրցունակության աստիճանի էական ավելացմանը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ